ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՋԵՐՄՈՒԿ,ԶԱԽԱՓՆՅԱԿ 27/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱԲՈՒԺԱՐԱՆԻ ԵՎ ԳՆԴԵՎԱՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՎՁՄՁՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20

ք. Ջերմուկ «03» ապրիլի 2020թ.

Ջերմուկի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանի, ով գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բաղեշ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Սամվել Եղիկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է վերանորոգման նախագծման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.6 շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին: [18]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 800000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[21]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Ջերմուկի համայնքապետարան	«Բաղեշ» ՍՊԸ
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8	Ք.Արարատ,Շահումյան 53/12
Կենտրոնական գանձապետարան	«ՀայէկոնոմԲանկ» ՓԲԸ,Արարատ մ/ճ
Հ/Հ 900362000110,900362040405	Հ/Հ 163328028655
ՀԿՀՀ 08913735	ՀԿՀՀ 04110665
համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան	Տնօրեն՝ Ա.Եղիկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«03» ապրիլի 2020թ. կնքված
N ՎՁՄՁՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	71321160	Ջերմուկ համայնքի ք.Ջերմուկ,Ձախափնյակ 27/7 հասցեում գտնվող համաբուժարանի վերանորոգման նախագծման ծառայություններ(Աշխատանքային նախագծի համար հիմք է հանդիսացել թիվ N 04072013-10-0008 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը տրված 04.07.2013 թվականին, նախագծման առաջարկը ստացված Ջերմուկի Համայնքապետարանի կողմից և նախագծին կցված սեյսմիկ եզրակացությունը՝ կառուցապատելու բարեկարգելու և արդիականացնելու շինությունը և հարակից տարածքը որը գտնվում է	դրամ	600000	1	քՋերմուկ,Ձախափնյակ 27/7	03.04-24.04.2020թ

		ք.Ջերմուկ,Ձախափնյակ 27/7 հասցեում: Ներկա վիճակը: Շենքի կառուցումը ավարտվել է 2005 թվականին, շենքը նախատեսված է եղել ծառայելու որպես ամբուլատորիա և բոլոր համապատասխան նորմերը հաշվի է առնվել շինարարության և նախագծման ընթացքում: Շենքը չօգտագործելու պատճառով, առկա ներքին և արտաքին պատերի, հատակի, ծածկի սալերի և տանիքի ոչ լիարժեք լինելը խոչընդոտ են հանդիսանում շենքը շահագործելու համար: Ներքին հարդարումը եվս գտնվում է քանդված և կիսաքանդ վիճակում: Նախատեսվում է: Կառուցել մանկական զարգացման կենտրոն,կատարել սենյակների տեղաբաշխում ապահովելով անհրաժեշտ չափսերով տարածքները նման գործունեություն ծավալելու համար, վերանորոգել հատակները, տեղադրել ջեռուցման և օդափոխության համակարգերը, ապամոնտաժել հին դռները, պատուհանները,կատարել տանիքի մասնակի վերանորոգում, հատակը և արտաքին պատերը հիդրոմեկուսացնել, կատարել ջերմամեկուսացման աշխատանքները համաձայն նորմերի, կատարել ներքին հարդարանք և տեղադրել առաջին անհրաժեշտության կահավորանքը, բարեկարգել հարակից տարածքը և կահավորել մանկական խաղահրապարակին համապատասխան ագրեգատներով:)					
2	71321160	«Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքի սենյակների վերանորոգման նախագծման ծառայություններ(Ներկա վիճակը: Շենքը ծառայում է որպես Գնդեվազ գյուղի մանկապարտեզ, ընդհանուր շինությունը գտնվում է բարվոք վիճակում, 2011ին կապիտալ վերանորոգված,և շինարարության ժամանակ համապատասխան նորմերը հաշվի է առնվել: Շենքի որոշ հատվածներում առկա է կիսաքանդ սենյակներ, բակային հատվածը ժամանակի ընթացքում խոնավության պատճառով քանդվել է, նույն պատճառով շենքի ճակատային հատվածի սվաղը քայքայվել և թափվել է մասամբ: Նախատեսվում է: Վերանորոգել սենյակները, առկա տարածքի վերաբաշխումով ստանալ մանկական սպորտ սենյակ, հանդերձարան և պահեստ, բարելավել շենքի արտաքին տեսքը, բարեկարգել հարակից տարածքը,	դրամ	200000	1	գ.Գնդեվազ 8-րդ փ.,1.փկղ.,2.3	03.04-24.04.2020 թ

		կազմակերպել համապատասխան հիդրոմեկուսացումը և ջերմամեկուսացումը, ներառել մինիմալ կահավորման աշխատանքների նախագիծը:)					

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա ապրիլի 23-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362000110,900362040405
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Բաղեշ» ՍՊԸ
Ք.Արարատ,Շահումյան 53/12
«ՀայէկոնոմԲանկ» ՓԲԸ,Արարատ մ/ճ
Հ/Հ 163328028655
ՀՎՀՀ 04110665
Տնօրեն՝ Ս.Եղիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«03» ապրիլի 2020թ. կնքված
N ՎՁՄՁՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71321160	Ջերմուկ համայնքի ք.Ջերմուկ,Ձախափնյակ 27/7 հասցեում գտնվող համաբուժարանի վերանորոգման նախագծման ծառայություններ	... %	... %	... %	600000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	800000
	71321160	«Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքի սենյակների վերանորոգման նախագծման ծառայություններ	... %	... %	... %	200000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362000110,900362040405
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Կ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Բաղեշ» ՍՊԸ
Ք.Արարատ,Շահումյան 53/12
«ՀայէկոնոմԲանկ» ՓԲԸ,Արարատ մ/ճ
Հ/Հ 163328028655
ՀՎՀՀ 04110665
Տնօրեն՝ Ս.Եղիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«03» ապրիլի 2020թ. կնքված
N ՎՁՄՁՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Բաղեշ» ՍՊԸ
Ք.Արարատ,Շահումյան 53/12
«ՀայէկոնոմԲանկ» ՓԲԸ,Արարատ մ/ճ
Հ/Հ 163328028655
ՀՎՀՀ 04110665

Պատվիրատու
Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362000110,900362040405
ՀՎՀՀ 08913735

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N01
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը Ջերմուկ համայնքի ք.Ջերմուկ,Ձախափնյակ 27/7 հասցեում գտնվող համաբուժարանի եվ Գնդեվազ համայնքի մանկապարտեզի նախագծման ծառայությունների մատուցման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «03» ապրիլի 2020թ.

Պայմանագրի համարը՝ ՎՁՄՁՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2020թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Ջերմուկ համայնքի ք.Ջերմուկ,Ձախափնյակ 27/7 հասցեում գտնվող համաբուժարանի վերանորոգման նախագծման ծառայություններ	Ջերմուկ համայնքի ք.Ջերմուկ,Ձախափնյակ 27/7 հասցեում գտնվող համաբուժարանի վերանորոգման նախագծման ծառայություններ	1	1	03.04-23.04.2020թ	03.04-23.04.2020թ	600	Ըստ պայմանագրի
2	«Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքի	«Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքի սենյակների վերանորոգմ	1	1	03.04-23.04.2020թ	03.04-23.04.2020թ	200	Ըստ պայմանագրի

	սենյակների վերանորոգման նախագծման ծառայություններ	ան նախագծման ծառայություններ						
								Ընդամենը՝800000

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

Ս.Եղիկյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

Կ.Հովհաննիսյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«03» ապրիլի 2020թ. կնքված
N ՎՁՄՁՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N01

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Ջերմուկի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բաղեշ» ՍՊԸ-(այսուհետ՝ Կատարող) միջև 2020 թ. ապրիլի 03-ին կնքված N ՎՁՄՁՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20 գնման պայմանագրի ...ջանակներում Կատարողը 2020թ. ...ին հանձնման-ընդունմաննպատակով Պատվիրատուին հանձնեց ...որև նշված ծառայությունները.

Ծառայության

անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Նախագծման ծառայություններ	դրամ	1
Նախագծման ծառայություններ	դրամ	1

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ս.Եղիկյան
ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

Վ.Հովհաննիսյան
ազգանուն, անուն

ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՋԵՐՄՈՒԿ,ՁԱԽԱՓՆՅԱԿ 27/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱԲՈՒԺԱՐԱՆԻ ԵՎ ԳՆԴԵՎԱՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 03 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N ՎՁՄՋՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20 ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Ջերմուկ

23 ապրիլի 2020թ.

Ջերմուկի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանի, որը գործում կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բաղեշ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սամվել Եղիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, հիմք ընդունելով 03.04.2020թ. կնքված N ՎՁՄՋՀ-ՆԽ-ԾՁԲ-03/04/20 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը,փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կնքված պայմանագրի *Հավելված N 1-ում* նշված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը 23.04.2020թ. ի փոխարեն սահմանել 22.05.2020թ. ը:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջերմուկի համայնքապետարան	«Բաղեշ» ՍՊԸ
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8	Ք.Արարատ,Շահումյան 53/12
Կենտրոնական գանձապետարան	«ՀայէկոնոմԲանկ» ՓԲԸ,Արարատ մ/ճ
Հ/Հ 900362000110,900362040405	Հ/Հ 163328028655
ՀՎՀՀ 08913735	ՀՎՀՀ 04110665
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան	Տնօրեն Ս.Եղիկյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ